



Կալիֆորնիա նահանգի հաշմանդամների պաշտպանության և շահերի ներկայացման համակարգ

Աշխատանքի ընդունման աջակցություն/Աշխատանքի ընդունման խթանիչ ծրագրեր գործատուների համար Լրացուցիչ սոցիալական նպաստի (SSI) ծրագրի շրջանակներում, քաժին XVI

Մարտ 2016թ., Հր. #5523.10

Ի՞նչ կպատահի իմ SSI նպաստների հետ, եթե ես անցնեմ աշխատանքի:

Սա ամենահաճախ տրվող հարցերից մեկն է, որը տալիս են Լրացուցիչ սոցիալական նպաստի ծրագրից օգտվողները (Supplemental Security Income - SSI), ովքեր ցանկանում են աշխատել:

Սոցիալական ապահովության վարչությունը (Social Security Administration - SSA) տրամադրում է աշխատանքի ընդունման աջակցություն, իրականացնում է աշխատանքի ընդունման խթանիչ ծրագրեր, որոնք կարող են օգնել Ձեզ աշխատանքի ընդունվելու հարցում: Աշխատանքի ընդունման աջակցությունը/խթանիչ ծրագրերը թույլ են տալիս Ձեզ պահպանել աշխատանքի անցնելու ընթացքում SSI-ով Ձեզ վճարվող գումարները և MediCal ծածկույթը: Ստորև քննարկվում է SSA-ի կողմից տրամադրվող աշխատանքի ընդունման աջակցությունը/աշխատանքային խթանիչ ծրագրերը, որոնք

նախատեսված են SSI ծրագրից օգտվող այն մարդկանց համար, ովքեր աշխատում են:

I. SSI ծրագրով առաջարկվող աշխատանքի ընդունման աջակցություն/աշխատանքի ընդունման խթանիչ ծրագրեր

Հաշվարկային եկամուտ. Եթե Դուք ստանում եք վճարումներ SSI ծրագրով և աշխատում եք, SSA-ը պետք է սահմանի Ձեր հաշվարկային եկամուտը (countable income - CI): Հաշվարկային եկամուտը աշխատանքի դիմաց ստացած Ձեր ամսական համախառն եկամուտների գումարն է, որը հաշվարկվում է Ձեր SSI վճարումների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ Ձեր SSI չեքը կնվազեցվի հաշվարկային եկամտի գումարի չափով:

Ձեր հաշվարկային եկամտի հաշվարկը. Երբ SSA-ը որոշում է, թե Ձեր եկամուտները ինչ չափով են նվազեցնելու Ձեր SSI վճարումը, SSA-ը հաշվարկում է Ձեր աշխատանքի դիմաց ստացած հաշվարկային եկամուտը՝ թույլ տալով որոշակի մասհանումների ու ծախսերի նվազեցումներ Ձեր համախառն աշխատանքային եկամտից: Այդ ծախսերը և մասհանումները ներառում են.

- *Մասհանում ընդհանուր եկամտից (General Income Exclusion - GIE)* – 20 ԱՄՆ դոլարի չափով GIE-ը հանվում է ցանկացած տեսակի եկամտից՝ աշխատանքի վարձատրումից ստացած կամ անաշխատ եկամտից:
- *Մասհանում աշխատանքային եկամտից (Earned Income Exclusion - EIE)* – 65 ԱՄՆ դոլարի չափով EIE-ը հանվում է միայն աշխատանքի վարձատրումից ստացած եկամտից:
- *Հիսուն տոկոս (50%)* չհաշվարկվող գումար, այս ենթագումարի հիսուն տոկոսը հանվում է, քանի որ Ձեր աշխատած յուրաքանչյուր 2 ԱՄՆ դոլարի համար SSA-ը նվազեցնում է Ձեր SSI վճարումը 1 ԱՄՆ դոլարով:
- *Առողջական անբավարար վիճակով պայմանավորված աշխատանքային ծախսը (Impairment Related Work Expense - IRWE)* Ձեր առողջական անբավարար վիճակի հետ կապված ծախսն է, որը վճարում էք Ձեր գրպանից Ձեր աշխատանքը

հնարավոր դարձնող ապրանքների ու ծառայությունների դիմաց և որը չի փոխհատուցվում որևէ մեկի կողմից:

- *Մասհանում ուսանողի աշխատանքային եկամտից (Student Earned Income Exclusion - SEIE)*, սա մասհանում է այն ուսանողի աշխատանքային եկամտից, ով հաշմանդամ է և աշխատում է: Ուսանողը պետք է լինի 22 տարեկան կամ ավելի փոքր և դասերը ստանա որևէ դպրոցում կամ տանը:
- *Կույր անձի աշխատանքային ծախսը (Blind Work Expense - BWE)* այն ծախսն է, որը կատարում է SSI ծրագրից օգտվող կույր անձը իր աշխատանքի համար: Միայն կույր անձը կարող է ունենալ BWE ծախսեր:
- *Ինքնաօժանդակման պլանը (Plan for Achieving Self Support - PASS)* գործիք է, որը SSI ծրագրից օգտվողին թույլ է տալիս իր եկամտից/ռեսուրսներից մի մասն առանձին կուտակել՝ որևէ հատուկ աշխատանքային նպատակ իրականացնելու համար:
- *Ինքնաօժանդակման համար էական գույքն (Property Essential for Self Support - PESS)* այն գույքն է, որն ունի ինքնազբաղված կամ անկախ աշխատողը և որի նշանակությունն էական է գործունեությունը հաջող իրականացնելու համար: SSI վճարումների համար համապատասխանությունը որոշող CI-ի հաշվարկում այս գույքը/ռեսուրսը չի հաշվարկվի:

Ձեր SSI վճարման գումարի հաշվարկումը. Որոշելու համար, թե որքան SSI գումար Դուք պետք է ստանաք, SSA-ը Ձեր SSI չեքից հանում է Ձեր հաշվարկային եկամուտը՝ նոր SSI վճարման գումար ստանալու համար, եթե կարող է լինել այդպիսին: Կալիֆորնիայում Ձեր SSI չեքում համատեղված են դաշնային և նահանգային պետական վճարումները: Ձեր SSI չեքը ներառում է.

- Նպաստի դաշնային գումար (Federal Benefit Rate - FBR) – FBR-ը այն առավելագույն գումարն է, որը դաշնային կառավարությունը վճարում է SSI նպաստների համար (733.00 ԱՄՆ դոլար 2016թ.-ին):
- Նահանգային լրավճարի ծրագիր (State Supplement Program) - SSP-ն այն առավելագույն գումարն է, որը Կալիֆորնիա նահանգը վճարում է SSI նպաստների համար (ներկայումս կազմում

Էջ 4` 7-ից

Է156.40 ԱՄՆ դոլար ոչ կույրերի համար /211.40 ԱՄՆ դոլար կույրերի համար):

Օրինակ. Դուք աշխատում եք և ստանում եք ամսական 1,000.00 ԱՄՆ դոլար համախառն աշխատավարձ: Դուք նաև ստանում եք 889.40 ԱՄՆ դոլար (հաշմանդամների համար) կամ 944.40 ԱՄՆ դոլար (կույրերի համար) SSI վճարում և ունեք SSI-ին կապված MediCal ծածկույթ:

Այս օրինակը ցույց կտա հաշվարկային եկամտի և SSI վճարման հաշվարկումը հաշվարկային եկամտի հիմնական բանաձևի հիման վրա: Օրինակը չի ներառում աշխատանքի ընդունման աջակցման/աշխատանքային խթանիչ ծրագրեր, ինչպիսիք են՝ IRWE-ն, BWE-ն կամ SEIE-ն:

Հաշվարկային եկամտի հաշվարկ

Համախառն եկամուտներ	\$1,000.00	նախքան հարկերը
Մասհանում ընդհանուր եկամտից – GIE	\$-20.00	
Մնացորդ	\$980.00	
Մասհանում աշխատանքային եկամտից – EIE	\$-65.00	
Մնացորդ	\$915.00	
50% անտեսում (բաժանել 2-ի)	\$457.50	
Ընդհանուր հաշվարկային եկամուտ	\$457.50	

SSI վճարման հաշվարկ

	<i>Ոչ կույրեր</i>	<i>Կույրեր</i>
2016թ. նպաստի դաշնային գումար – FBR	\$733.00	\$733.00
2016թ. Կալիֆորնիայի նահանգային լրավճարի ծրագիր - SSP	+\$156.40	+\$211.40
Ընդհանուր SSI գումար	\$889.40	\$944.40
Հանած հաշվարկային եկամուտ (վերոնշյալ)	-\$457.50	-\$457.50
SSI վճարման գումար	\$431.90	\$486.90

** Եթե ընդհանուր հաշվարկային եկամուտը զրո է կամ բացասական թիվ է, Դուք համապատասխանում եք տվյալ ամսում ամբողջական SSI վճարում ստանալու համար:

Ձեր ընդհանուր եկամուտը կլինի \$1,431.90 (\$1000 աշխատավարձեր + \$431.90 SSI) կամ \$1486.90 (\$1000 աշխատավարձեր + \$486.90 SSI): Դուք կպահպանեք նաև Ձեր SSI-ին կապված MediCal-ը:

MediCal ծածկույթ. Կան MediCal-ի տարբեր դասակարգումներ, որոնց SSI ծրագրի ստացողը կարող է համապատասխանել՝ MediCal-ի ծառայություններն ստանալու համար: Այդ ծրագրերն են.

- *SSI-ին կապված MediCal* - SSA օրենքով ցանկացած ժամանակ, երբ ստանում եք \$1.00 SSI վճարումներում, Դուք իրավունք ունեք օգտվել MediCal-ի ծածկույթից ամբողջական ծավալով:
- *Բաժին 1619b, MediCal* – Սոցիալական ապահովության օրենքի (Օրենք) բաժին 1619b-ը թույլ է տալիս Ձեզ պահպանել MediCal ծածկույթը, եթե Ձեր SSI կանխիկ վճարումը կորցնելու միակ պատճառը եղել են Ձեր եկամուտները: MediCal ծածկույթը կարող եք պահպանել մինչև պետական “շեմը”, որը 2015թ. կազմել է 37,805 ԱՄՆ դոլար: Ձեր անհատական բժշկական ծախսերից ելնելով՝ Դուք կարող եք MediCal-ի նահանգային մարմնի հետ բանակցել նաև անհատական շեմ:
250% Կալիֆորնիայի հաշմանդամների աշխատանքային ծրագիր (250% California Working Disabled Program - 250% CWD ծրագիր)- 250% CWD ծրագիրը Կալիֆորնիայի Medicaid “Buy-in” ծրագիրն է, որը Ձեզ թույլ է տալիս գնել MediCal ծածկույթն ամբողջական ծավալով նահանգային MediCal համակարգով:
- *Տարեց, հաշմանդամ մարդկանց դաշնային նվազագույն զամբյուղին (Aged, Disabled Federal Poverty Level - A&DFPL) համապատասխան MediCal* – A&DFPL ծրագիրը տրամադրում է ամբողջական ծավալով MediCal այն անհատներին, ովքեր բավարարում են եկամտային և գույքային պահանջները: Կույր մարդիկ կարող են նույնպես համապատասխանել A&DFPL ծրագրին, եթե նրանք ունեն ֆիզիկական հաշմանդամություն:

Էջ 6` 7-ից

- *Բժշկական կարիքների MediCal ծրագիր (Medically Needy MediCal program)* - Բժշկական կարիքների ծրագիրը MediCal ծրագիր է, որով անհատը, կախված եկամտից, կարող է ստանալ ծախսերի համատեղ վճարում կամ "ծախսերի կիսում":

Արագացված վերականգնում. Ticket to Work ծրագրի արագացված վերականգնման (expedited reinstatement - EXR) դրույթը հեշտացնում է Ձեզ համար Ձեր նպաստների վերականգնումը: Որոշակի հանգամանքներում SSI նպաստները կարող են վերականգնվել անգամ, եթե Դուք SSI նպաստ ստանալու համար համապատասխան չեք եղել շարունակաբար տասներկու (12) կամ ավելի ամիսների ընթացքում առանց նոր դիմում տալու:

Արագացված վերականգնման դրույթը Ձեզ թույլ է տալիս տեղեկացնել SSA-ին, որ Դուք այլևս չունեք եկամուտներ, որոնք Ձեզ դարձնում են անհամապատասխան SSI վճարումներ ստանալու համար: Դուք կարող եք պահանջել, որ Ձեզ անհրաժեշտ է վերականգնել Ձեր նպաստները: Ձեր նպաստները կարող են վերսկսվել մոտավորապես երեքից վեց շաբաթվա ընթացքում:

SSA աշխատանքի ընդունման աջակցության/աշխատանքի ընդունման խթանիչ ծրագրերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության համար կարող եք այցելել Սոցիալական ապահովության կայքէջ www.socialsecurity.gov հասցեով կամ ստանալ SSA հրապարակման կրկնօրինակը՝ *Redbook on Employment Supports*: Դուք կարող եք նաև կապվել SSA-ի Աշխատանքի ընդունման խթանիչ ծրագրերի տարածքային կոորդինատորի, Աշխատանքի ընդունման խթանիչների պլանավորման և աջակցության ծրագրի Ձեր տարածքային մարմնի հետ: Դուք կարող եք կապվել նաև PABSS ծրագրի հետ 800-776-5746 հեռախոսահամարով կամ այցելել Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության կայքէջ www.disabilityrightsca.org հասցեով:

SSA-ը ստուգել է հետևյալ հրապարակման միայն տեխնիկական ճշտությունը, այնուամենայնիվ այս փաստաթուղթը չպետք է համարվի որպես SSA պաշտոնական փաստաթուղթ:

Էջ 7` 7-ից

*Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքներով զբաղվող
կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից,
հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս*

<http://www.disabilityrightsca.org/>

[Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html):
